ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

(Քաղվածք)

Վանաձորի համայնքի ավագանու հերթական նիստի՝ կայացած 18.04.2017 թ.,

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Արտյոմ Գրիգորյանը, Մեյրան Ղամբարյանը, Գայանե Քալանթարյանը, Արմեն Մատինյանը, Մարինե Հովհաննիսյանը, Վահե Դոխոյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Վահագն Ավագյանը, Խորեն Վարդանյանը և Արման Ափինյանը*:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Մեյրան Աղաբեկյանը և Արմենուհի Կյուրեղյանը*:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը*, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.20-ին նիստը հայտարարեց բացված և շնորհավորեց ներկաներին անցած Սուրբ Հարություն տոնի և ապրիլի 2-ի համապետական ընտրությունները բարձր մակարդակով անցակացնելու կապակցությամբ, ինչպես նաև շնորհավորանքի խոսքեր և ջերմ մաղթանքներ հղեց Վանաձորի ավագանու անդամ Արմինե Կյուրեղյանին, ով կարժանանա Ազգային ժողովի պատգամավորի կոչմանը՝ ՀՅԴ կուսակցական ցուցակով:

Այնուհետ *Մ. Ասլանյանը* ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց քվեարկությամբ հաստատել այն :

Միաձայն՝ 15 կողմ, քվեարկությամբ հաստատվեց օրակարգն ամբողջությամբ , ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր:

Հաստատվեց օրակարգը՝

2.Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեի 3 ամսվա կատարման վերաբերյալ
(զեկ.՝ *Ա.Ավագյան*)

3.Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի «Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 8-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին
(զեկ.՝ *Ա.Ավագյան*)

4.Վանաձորի համայնքապետարանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին (զեկ.՝ *Գ.Բաղյան* , զեկ.՝ *Գ.Մացակյան*)

5.Վանաձոր համայնքի 2016 թվականի զարգացման քառամյա ծրագրի իրականացման հաշվետվությունը հաստատելու մասին
(զեկ.՝ *Լ.Դավթյան*)

6.2016 թվականի ապրիլյան պատերազմական գործողությունների ժամանակ հայրենիքի պաշտպանության մարտերում զոհված, վիրավոր ազատամարտիկների և զինծառայողների ընտանիքներին աջակցություն տրամադրելու մասին
(զեկ.՝ *Ա.Բերնեցյան*)

7.Վանաձոր համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 24-ի ««Գագիկ Ղազարյան» մարզական ակումբին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված տարածքից ենթավարձակալության իրավունքով տարածք տրամադրելուն համաձայնություն տալու մասին» թիվ 12-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
(զեկ.՝ *Ա.Ավագյան*)

8.2016թ. խուլ-համրերի հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի առաջնության հաղթող և ազատ ըմբշամարտի բրոնզե մեդալակիր Սենիկ Սերոբյանին ամենամյա նպաստ նշանակելու մասին
(զեկ.՝ *Ա.Ավագյան*)

9.«Հարինգ» ՍՊԸ տնօրեն Կարեն Ծատուրյանին տարածքը ենթավարձակալության հանձնելուն համաձայնություն տալու մասին (զեկ.՝ *Կ.Սարոյան*)

10.Վանաձոր համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 31.03.2017թվականի թիվ 5-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, (զեկ.՝ *Կ.Դավիթավյան*)

11.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի վարձավճարների և համայնքի սեփականություն հանդիսացող ոչ բնակելի և բնակելի տարածքների վարձավճարների չափերը սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 2014թվականի նոյեմբերի 18-ի թիվ 59-Ն որոշման 2-րդ կետը և Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի թիվ 6-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, (զեկ.՝ *Կ.Սարոյան*)

12.Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին, (զեկ.՝ *Մ.Ասլանյան*)

1. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեի 3 ամսվա կատարման վերաբերյալ:

- զեկուցեց՝ աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ *Ա.Ավագյանը*:

զեկուցումից հետո նիստը վարողը լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց ավագանու անդամներին: Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեց՝

Մեյրան Ղամբարյանը՝ Վանաձոր-Քիմպրոմի համայնքի բյուջեին ունեցած պարտքերի վերաբերյալ :

Գայանե Քալանթարյանը՝ բյուջեի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց պարտքերի վերաբերյալ:

Նիստը վարողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և նախագիծը դրեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 կողմ, ընդունվեց որոշում :

2. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի «Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 8-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին :

- զեկուցեց ՝ աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ *Ա.Ավագյանը*:

Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեցին ՝

Արմեն Մատինյանը՝ հատկացվող գումարի շրջանակներում կատարվելիք աշխատանքերի համար կապալառուի ընտրության վերաբերյալ:

Վահագն Ավագյանը ՝ այլ թաղամասերում նմանատիպ խնդիրների լուծման հնրավորությունների վերաբերյալ:

Հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել օրակարգի հարցը.

Քվեարկությամբ, կողմ՝ **15** կողմ, ընդունվեց որոշում :

3. ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքապետարանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

- զեկուցեցին ՝ աշխատակազմի Կրթության և մշակույթի և Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետեր *Գ.Մացակյանը և Գ. Բաղյանը:*

Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեցին ՝

Արմեն Մատինյանը ՝ ներկայացնելով ավագանու ՀՀԿ խմբակցության դրական տեսակետը նախագծի վերաբերյալ հարցման կարգով առաջարկեց հակիրճ հիմնավորել հաստիքների կրճատման անհրաժեշտությունը հանրության կողմից գործընթացի վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելու նպատակով:

Արմենուհի Կյուրեղյանը ՝ գրադարանային համակարգի աշխատակիցների ցածր աշխատավարձի վերաբերյալ, օրինակ բերելով գրադարանի վարիչի հաստիքով նախատեսված աշխատավարձը: Խնայված գումարների հետագա ծախսերի ուղղությունների վերաբերյալ:

Գայանե Քալանթարյանը ՝ կրճատված հաստիքների և օպտիմալացման գործընթացի արդյունքում բյուջետային խնայողությունների վերաբերյալ: Գրադարանների զարգացման հստակ տեսլական ունենալու վերաբերյալ:

Խորեն Վարդանյանը ՝ մարզադպրոցների համար նոր գույքի ձեռքբերման վերաբերյալ:

Վահագն Ավագյանը ՝հարցման կարգով արտահայտեց տեսակետ, որ յուրաքանչյուր հաստիքի դիմաց, որքան էլ որ այն նվազ լինի, հաստիք զբաղեցնողը պարտավոր է պարտաճանաչ կատարել իր

պարտականությունները, ինչպես նաև երաշխիքների մասին, որ թույլ կտան որակյալ կադրերերին պահպանել իրենց աշխատանքը:

Արմեն Մատինյանը ՝ հանրությանը պարտադիր տեղեկացվի, թե խնայված միջոցները որ ուղղությամբ են հետագայում օգտագործվելու:

Արման Ափինյանը՝ մարզադպրոցում մերսողի հաստիքի առկայության պարագայում մասնագիտական հիմնավորման վերաբերյալ:

Գայանե Քալանթարյանը՝ լողի մարզադպրոցում ադմինիստրատորի նոր հաստիքի վերաբերյալ:

Գայանե Քալանթարյանը և Մեյրան Ղամբարյանը ՝լողի մարզադպրոցում փրկարար և ընդհանարապես մարզիչների հաստիքների քանակի վերաբերյալ

Վահագն Ավագյանը ՝լողավազանի օրացուցային տարվա ընթացքում անընդհատ աշխատելու վերաբերյալ:

Արմեն Մատինյանը ՝հետագայում մարզադպրոցների զարգացման հարցը հնգամյա ծրագրում ներառելու վերաբերյալ:

Արմենուհի Կյուրեղյանը ՝մարզադպրոցներում բուժքույրերի հաստիքների և հաստիքների անվանման վերաբերյալ:

Բոլոր հարցերին նիստը վարողի և զեկուցողների կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ և պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել օրակարգի հարցը:

Քվեարկությամբ, կողմ՝ **13** կողմ, ձեռնպահ ՝ 2 (Մեյրան Աղաբեկյան և Արմենուհի Կյուրեղյան) ընդունվեց որոշում:

4 ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի 2016 թվականի զարգացման քառամյա ծրագրի իրականացման հաշվետվությունը հաստատելու մասին

-(զեկուցեց Ծրագրերի և արտաքին հարաբերությունների բաժնի պետ .՝ *Լ.Դավթյանը*)

Զեկուցումից հետո հարցի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ տվեց նիստը վարողը:

Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեցին ՝

Գայանե Քալանթարյանը ՝ համայնքապետարանի կայք էջի ծրագրային թարմացման վերաբերյալ

Արմեն Մատինյանը՝ իրականացված աշխատանքները համեմատական աղյուսակի ձևով ներկայացանելու վերաբերյալ:

Արմենուհի Կյուրեղյանը ՝*չկատարված աշխատանքների վերաբերյալ:*

Հարցերին պատասխանեցին և լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրին նիստը վարողը և զեկուցողը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել օրակարգի հարցը:

Քվեարկությամբ, կողմ՝ 14 կողմ, (Վ. Ավագյանը չմասնակցեց քվեարկությանը), ընդունվեց որոշում :

5. ԼՍԵՑԻՆ - 2016 թվականի ապրիլյան պատերազմական գործողությունների ժամանակ հայրենիքի պաշտպանության մարտերում զոհված, վիրավոր ազատամարտիկների և զինծառայողների ընտանիքներին աջակցություն տրամադրելու մասին:

-զեկուցեց՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ա.Բերնեցյանը:

Զեկուցողի առաջարկությամբ նիստին ներկա ավագանու անդամները մեկ րոպե լռությամբ հարգեցին 2016 թվականի ապրիլյան պատերազմի զոհերի հիշատակը:

Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեցին՝

Դավիթ Սիմոնյանը՝ մարտերում զոհված, վիրավոր ազատամարտիկների և զինծառայողների ընտանիքների ցուցակի վերաբերյալ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 կողմ, ընդունվեց որոշում :

6. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 24-ի ««Գագիկ Ղազարյան» մարզական ակումբին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված տարածքից ենթավարձակալության իրավունքով տարածք տրամադրելուն համաձայնություն տալու մասին» թիվ 12-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

- զեկուցեց՝ աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ *Ա.Ավագյանը*:

Նախագծի մասին լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նիստը վարողը:

Ավագանու անդամների կողմից հարցեր չհնչեցին:

Նախագիծը նիստը վարողը դրեց քվեարկության :

Քվեարկությամբ, կողմ՝ 15 կողմ, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ - 2016թ. խուլ-համրերի հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի առաջնության հաղթող և ազատ ըմբշամարտի բրոնզե մեդալակիր Սենիկ Սերոբյանին ամենամսյա նպաստ նշանակելու մասին
(զեկ.՝ *Ա.Ավագյան*)

- զեկուցեց՝ աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ *Ա.Ավագյանը*:

Ավագանու անդամների կողմից հարցեր չհնչեցին:

Նիստը վարողը նախագիծը դրեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 կողմ, ընդունվեց որոշում

8. ԼՍԵՑԻՆ - .«Հարինգ» ՍՊԸ տնօրեն Կարեն Ծատուրյանին տարածքը ենթավարձակալության հանձնելուն համաձայնություն տալու մասին.

-զեկուցեց աշխատակազմի Գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ՝ Կ.Սարոյանը:

Նախագծի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նիստը վարողը:

Հարցեր չհնչեցին զեկուցողին:

Նիստը վարողը նախագիծը դրեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 կողմ, ընդունվեց որոշում:

9. ԼՍԵՑԻՆ - Նիստը վարողն առաջարկեց քննարկել որոշման նախագծերի լրամշակված տարբերակները և քվեարկությամբ հաստատել դրանք :

9.1 Վանաձոր համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին թիվ 5-Ն որոշման լրամշակված նախագիծը
9.2 Հաստատել 2017 թվականի մարտի 31-ի Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի վարձավճարների և համայնքի սեփականություն հանդիսացող ոչ բնակելի և բնակելի տարածքների վարձավճարների սակագները սահմանելու մասին թիվ 6-ն որոշման լրամշակված նախագիծը և ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համյնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 59-Ն որոշման 2-րդ կետը:
-զեկուցեց՝ համայնքի աշխատակազմի Առևտրի և սպասարկման, տրանսպորտը համակարգող բժնի պետ՝ Վ Դավիթավյանը:

Նիստը վարողը նախագծերը դրեց քվեարկության:
Ավագանու անդամների կողմից հարցեր չհնչեցին

- Քվեարկությամբ, կողմ՝ 15 կողմ, ավագանին հաստատեց Վանաձոր համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին թիվ 5-Ն որոշման լրամշակված նախագիծը՝ համաձայն հավելվածի:

- Քվեարկությամբ, կողմ՝ 15, ավագանին ուժը կորցրած ճանաչեց Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 59-Ն որոշման 2-րդ կետը և միաժամանակ , միաձայն հաստատեց 2017 թվականի մարտի 31-ի Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի վարձավճարների և համայնքի սեփականություն հանդիսացող ոչ բնակելի և բնակելի

տարածքների վարձավճարների սակագները սահմանելու մասին» թիվ 6-Ն որոշման լրամշակված նախագիծը

10. Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել մայիսի 30-ը:

Առաջարկը դրվեց քվեարկության: Քվեարկությամբ, կողմ՝ 15 կողմ, ընդունվեց որոշում Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2017 թվականի մայիսի 30-ը:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Արձանագրությունը կազմեց

Աշխատակազմի Ք.Տ. և Ա. բաժնի պետ Է. Հովսեփյանը